

RELAZIONI

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ծործորի վանքը¹, հիմնադրուած Զաքարիա Ծործորեցիին եւ շարունակուած անոր գաղափարակցին՝ Յովհաննէս Ծործորեցիին կողմէ, ԺԴ. դարու իր դպրոցով եւ աստուածաբանական գործունէութեամբ, Ատրպատականի հայոց մեր թեմին մէջ, մեր հայկականութեան եւ մշակութային արմատներուն միասնութեան անխօս վկան է այսօր: Հայ եկեղեցւոյ պատմութեան էջերուն մէջ այս վանքին գոյութիւնը իր կրօնա-մշակութային, եւ սքոլասթիք գործերու թարգմանական լայնածաւալ աշխատանքով, գիտական մօտեցումով մը կարելի է գատորոշել դաւանական՝ ուղղափառ եւ կաթողիկէ խնդիրներէ:

Յովհաննէս Երզնկացիին կամ՝ ապա Յովհաննէս Ծործորեցի վարդապետը, Ներսէս Շնորհալիի Մատթէի Մեկնութիւնը² շարունակելէ բացի, այս վանքին մէջ Թովմաս Ազուխնացիի «յաղագս եւթն խորհրդոց եկեղեցւոյ» գործը կը թարգմանէ, նոյն առիթով ըսելով. «մեծաւ քախանձանօք քարգմանցի զսա ի հայ բարբառ հրամանաւ պապիմ հոռմայ»³: Ան թարգմանած է նաեւ Ալպերթուս Մեծ եւ այլ գործեր: Սոյն թարգմանական աշխատանքներով Յովհաննէս Ծործորեցիին եւ իր կուսակից աշակերտները, ժամանակի արեւմտեան աստուածաբանական գրականութեան հետ նաեւ կաթողիկէ դաւանութեան փոխադրիչները եղան բնականաբար: Սակայն սոյն գործերուն հայերէն թարգմանութեամբ բնագիրներ ունենալու հարստութեան գիտակցիլը այսօր, կը ստիպէ մեզի զանազանել հայ մատենագրութեան մէջ անոնց

1 ՀԱԽՆԱԶԱՐԵԱՆ, Ա., *Արտագի երեմ վանքերը*, Երեւան 2012, 187-205:

2 Շնորհալիմ զայն հասցուցած է մինչեւ Ե. գլուխի 17-րդ համարը:

3 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրած Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Բ., Երեւան 2004, 1267:

տեղը, հեղինակներուն դաւանական գաղափարներ տարածելու կամ այլ նպատակներ հետապնդած ըլլալու մտադրութենէն:

Գիտական նոյն երախտարժան գործին հետեւողութեան վըրայ կը սիրենք տեսնել նաեւ Մխիթարեան հայրերու ամբողջ աշխատանքը, հայ մշակոյթի տարրեր բնագաւառներու նկատմամբ մեղուաջան գործունէութեամբ եւ հսկայական ու անգնահատելի արդիւնքով:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Մփիւռքահայու ճակատագիրը մասամբ բաժնող այս երկու միաբանութիւնները, օտար միջավայրի մէջ հայկականութիւն պահպանելու եւ մեր մշակոյթը օտարներուն ծանօթացնելու առումով, հասարակ յայտարարի վրայ կը կանգնին:

Սորպոնի մեծ ամփիթատրոնին մէջ, 1948 թուի Յունիս 5ին, Կիլիկիոյ Գարեգին Ա. Յովսէփեանց Հայրապետի 80ամեայ յորելեանին առիթով տեղի ունեցած հանդիսութեան յայտագրի գրքոյկի վերջաւորութեան, մանր տառերով արձանագրուած է Վեհափառին փափաքը, թէ ան կ'ուզէ Անթիլիասը դարձնել երկրորդ Վենետիկ մը, երկու Միաբանութիւններուն հայ մշակոյթի ծառայական ուղղութիւններուն միջեւ մեծ նմանութիւն տեսնելով⁴: Նոյն հանդիսութեան գրեթէ կէսին կը հասնի խումբ մը, գլխաւորութեամբ Սեւրի Մուրատեան վարժարանի տեսուչ Հ. Սահակ Վրդ. Տէր Մովսէսեանի: Թէպէտ չէ՝ նախատեսուած անոր ելոյթը, սակայն Հ. Սահակ, Վեհափառի վերոյիշեալ փափաքը վեր առնելով կ'ըսէ. «Կաթողիկոսը կ'ուզէ դարձնել Անթիլիասը երկրորդ Վենետիկ մը, որ է ըսել՝ հայ մշակոյթի, հայ գրի եւ հայ գրականութեան կեդրոն մը, որուն վրայ Միթարեան մեր Միաբա-

4 Սոյն արտայայտութեան հիմք ծառայած են բնականաբար Գարեգին Յովսէփեանցի բանաւոր եւ գրաւոր յանախակի արտայայտութիւնները, որոնցմէ ումանց կը հանդիպինք իր նամակներուն մէջ: Այսպէս, Երոպայի Հայրապետական Պատուիրակ Տ. Արտաւազդ Արք. Սիրմէեանին Անթիլիասէն գրած իր 5 Յունուար 1948 թուակիր նամակին մէջ Հայրապետը կը գրէ. «Ինչո՞ւ չաշխատինք ստեղծել մի նոր Ս. Ղազար՝ ինն մտնով այս փերին» (Գարեգին Ա. Կրդ. Մեծի Տանն Կիլիկիոյ, հտ. Բ., աշխտ. Ա.Ի.Ա.Գ.Ե.Ա.Ն, Գ., Անթիլիաս 2017, 429): Նոյն միտքը կ'արտայայտէ ան նաեւ Արշակ Զօպանեանին, Անթիլիասէն իր գրած դարձեալ 5 Յունուար 1948 թուակիր նամակին մէջ. «Ինչո՞ւ անհնարին պիտի համարել մի նոր Ս. Ղազար հիմնել այս փերի վերայ՝ նոր հասկացողութեամբ» (Անդ, 431):

նութիւնը միայն կրնայ համակրանքով նայիլ, մանաւանդ այս ցաւալի կացութեան մէջ, ուր հայ ժողովուրդը ցիրուցան աշխարհի չորս հովերուն, կորսնցնելու վրայ է մայրենի լեզուին հետ նաեւ ազգային արժէքները, որոնցմով ազգ մը կրնայ տեւական դառնալ»։ *Ապա իր պատկերացումը տալով «երկրորդ» Վենետիկի մշակութանուէր գործունէութեան, Հ. Սահակ կ'ըսէ. «Եթէ Մխիթար Արքահայրը, հիմնադիրը Առաջին Վենետիկին, յաջողեցաւ օտար հողի վրայ կառուցանել իր հոյակապ գործը եւ դարձնել գայն Եւրոպայի եւ հայոց ազգին, հայ լեզուին, հայ մշակոյթի առաջնակարգ կեդրոն մը, կը համարիմ, որ Անթիլիասը, որ ծրագրած է ըլլալու երկրորդ Վենետիկ՝ աւելի նպաստաւորուած պիտի ըլլայ, այն տեսակետով՝ որ նա շրջապատուած է հայ ժողովուրդի հոծ գաղութներով, որոնք պիտի ուզեն օգնել միւսապէս որ այդ երկրորդ Վենետիկը իրողութիւն մը դառնայ։ Եթէ առաջին Վենետիկը յաջողեցաւ հայութիւնը նանչցնել իր ամբողջ կատարելութիւններով Եւրոպայի, եւ Եւրոպան հայութեան, ստեղծելով համակրութեան լայն հոսանքներ դէպի հայ ժողովուրդը, կը համարիմ որ Անթիլիասի վանքի դերն ալ պիտի ըլլայ հայութիւնը նանչցնել արաբական աշխարհի եւ արաբական աշխարհը հայութեան»⁵։*

Վենետիկի հետ Կիլիկեան հայրապետներուն կապը թէ՛ բանասիրական լուրջ գործակցութեան հարթակի վրայ եւ թէ՛ մրտերմական երանգով գունաւորուած, հայրենագուրկ արեւմտահայու գոյապահպանման փոխադարձ ձգողութիւն կ'արտայայտէ։

Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսը, 1920 թուականին կ'այցելէ Ս. Ղազար Մայրավանքը։ Կիլիկիոյ վերջնական պարպումէն առաջ եւ զայն փրկելու ու հայութեան վերադարձնելու մեծ յոյսով, Մարտ 13 – 1 Նոյեմբեր, եօթուկէս ամիս տեւած իր ճամբորդութեան ծիրին մէջ դէպի Ֆրանսա, Անգլիա եւ Իտալիա⁶, Սահակ Վեհափառ նկատի ունեցեր է նաեւ այցելել սփիւռքահայութեան յոյսի կարեւոր հրուանդաններէն մէկը՝ Ս. Ղազար կղզին, հիւրը ըլլալով Մխիթարեան հայրերուն։

5 «Բազմավէպ», ձԶ(1948), քիւ 9-10, 241:

6 ԵՂԻԱՅԵԱՆ, Բ., *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ 1914-1972*, Անթիլիաս 1975, 136: Տե՛ս նաեւ ԿԻՒԼԷՍԵՐԵԱՆ, Բ., *Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ, 1441-էն մինչեւ մեր օրերը*, ք. հրտ., Անթիլիաս 1990, 973-974: Տե՛ս նաեւ ՄԵԼՔՈՆԵԱՆ, Փ., *Յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ*, խմբ.՝ ԶԻՖԹՃԵԱՆ, Գր. Մ. Վրդ., Անթիլիաս 2006, 604:

Հովուապետական այցելութիւններու հայրական զօրակցութեան ծիրին մէջ, խորէն Ա. կաթողիկոսի այցելութիւնը Ս. Ղազար, 25 Մայիս 1967ին, խորհրդանշական նիւթական օժանդակութեան հետ միատեղ, բացայայտ նշան էր այն հիացումին, որ ունեցած է Կիլիկեան Աթոռը, մշակութային գերազանց նուիրումով իր առաքելութիւնը իրագործած Մխիթարեաններուն, իսկ միւս կողմէ, օրուան Աբբահայր՝ Հ. Հմայեակ Վրդ. Կէտիկեան իր ողջոյնի խօսքով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վաղուց անտի ունեցած կամուրջի գերը Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ կը շէշտէր, ողջունելով խորէն Վեհափառին այցելութիւնը Վատիկան եւ ապա հայրական ներկայութիւնը Ս. Ղազարի մէջ։ «Խոնարհ անկեղծութեամբ կրնամք յայտարարել, թէ Դո՛ւք, Վեհափառ Տէ՛ր, առաջինն եղաք Արեւելքի հովուապետներէն, որ այսօր սերտ եւ անձնական շփում մշակեցիք Արեւմուտքի հետ...»⁷։

Նոյն օրերուն, Հասկի խմբագրութիւնը վեր առնելով Մխիթարեաններու անձնուէր ծառայութիւնը հայ մշակոյթին կը գրէ։ «Բազմերախտ Մխիթարի վառած ջահը Վենետիկի մէջ, հայութեան հոգիին լոյսն ու ջերմութիւնը տարածեցին եւ խառնեցին Եւրոպայի իմացական լոյսին եւ ջերմութեան մէջ։ Բոնութեան եւ հալածանքի տակ հեծող ժողովուրդի մը, ջարդի եւ անբաժնի ենթարկուած ցեղի մը մասին Մխիթարեան Հայրերը վկայեցին քաղաքակիրթ Եւրոպային, թէ հայութիւնը ազատ, անկախ ապրելու կոչուած ազգ է, որովհետեւ իր ստեղծագործած մշակոյթով կը պատկանի հողէն, ժամանակէն եւ աշխարհէն վեր մնացող ազգերու դասին, որոնք չեն կորսուիր, պէտք չէ՝ խորտակուին, եթէ մարդկութիւնը իր հոգիին մէջ ունի լոյսի եւ հոգեւոր արժէքներու գիտակցութիւնը»⁸։

Յիշատակութեան արժանի է «Ի սեր Վենետիկի Ս. Ղազարու վանքին...» վերտառութեամբ Կիլիկիոյ Գարեգին Բ. Սարգիսեան կաթողիկոսին սրտցաւ կոչը, ուղղուած համայն հայութեան, հրապարակուած Անթիլիասի Մայրավանքէն 1986 թուականի Փետրուար 14ին, ընդառաջելով Մխիթարեան Միաբանութեան Աթոռակալ Հ. Բարսեղ Վրդ. Զէփիճեանի խնդրանքին, փրկելու տնտեսական տազնապի մէջ յայտնուած Ս. Ղազարը։ «Վենետիկի Մխիթարեան Միաբանութիւնը հայ ժողովուրդի մշակութային կեանքին մէջ ունի փառապանծ վաստակ մը։ Եւրոպական հողի վրայ, հարիւր հազարներով մարդիկ, օտար եւ հայ, Ս. Ղազար այցելելով՝ այնտեղ զգա-

7 ԵՂԻԱՅԵԱՆ, Բ., *Աղյւն*, 834։

8 «Հասկ», 1967, թիւ 6-9, 237-238։

ցած են հայութեան սրտին տրոփը, եւ ակամատես եղած են հայ հանձարին ստեղծագործութեան շֆեղ հանդիսարանին, հոգեւոր արժէքներու այն նոյն գանձարանին, որ հպարտութեան առիթ է ամբողջ հայութեան համար: Այս հայեցողութեամբ եւ ազգային պարտականութեան գիտակցութեամբ պէտք է շարժի մեր ժողովուրդը սոյն կենսական գործին յաջողութեան համար»⁹:

*Իր ընտրութենէն հազիւ տարի մը ետք, Արամ Ա. Կաթողիկոս Վատիկան կատարած իր այցելութեան առիթով, հովուապետի հայրական գուրգուրանքով կը ժամանէ Վենետիկի Ս. Ղազար մենաստանը, 26 Յունուար, 1997ին: Հարազատութեան եւ միասնութեան ոգին բարձր կը թեւածէ, եւ զոյգ միաբանութիւններու անդամները հանդիսապետութեամբ Վեհափառ Հայրապետին, ներկայ կը գտնուին Ս. Պատարագին, վանքի մայր խորանին վրայ, զոր կը մատուցէ Կիլիկեան Ուխտի միաբան՝ Օշական Եպս. Զօրոյեանը*¹⁰:

*Մխիթարեաններու առաքելութեան եւ Անթիլիասի հոգեմըտաւոր կազմաւորման արտայայտիչ են Արամ Ա. Կաթողիկոսի խօսքերը, Ս. Ղազարի մէջ արտասանուած. «Կարելի չէ՝ հասկնալ վերջին դարերու պատմութիւնը մեր ժողովուրդին, առանց Ս. Ղազարին, առանց հսկայ հոգեւոր ու մշակութային այն առաքելութեան ու ծառայութեան, որ լոյսի նման ճառագայթեց այս կողմէն: Այս կողմէն եղաւ փոքրիկ Հայաստան մը, ուր Խորենացիներ, Ագաթանգեղոսներ, Նարեկացիներ, Շնորհալիներ, Տաթևացիներ, մեր պատմութեան մտքի եւ հոգիի հսկաները կեանք առին ու կեանք տուին մեր ժողովուրդին: Այս կողմէն եղաւ փոքրիկ Հայաստան մը, որ Եռագոյնի խորհրդանշով, Եռագոյնի հաւատարմութեամբ ապրեցաւ ու գործեց ազատ ու անկախ Հայաստանին համար: Մենք այսպէ՛ս նայեցանք այս կեդրոնին, եւ այսօր կրնանք անվարան հաստատել, որ Մխիթարեան Միաբանութիւնը հոս եւ այլուր, հաւատարիմ մնաց Մխիթարներու եւ Ալիշաններու նուիրական կտակին, Հայ մշակոյթին նկատմամբ իր ունեցած, պաշտամունքի հասնող հաւատարմութեամբ»*¹¹:

Տեղապահ Հ. Յովսէփ Վրդ. Պէհէսնիլեան, իր ողջոյնի խօսքին մէջ, ընդհանրապէս Կիլիկիոյ հայրապետներու Վենետիկ կատարած այցելութիւններուն եւ ի մասնաւորի Արամ Կաթողիկոսի այցելութեան կը միացնէ նաեւ Կիլիկիոյ հայոց թագաւորութեան

9 Անդ, 1986, թիւ 2, 52:

10 Անդ, 1997, թիւ 1, 96:

11 Անդ, 99:

անկումէն ետք Կիլիկիոյ Հայրապետներու ստանձնած ազգապետի հանգամանքը, որով անոնք պահպանեցին ցանուցրիւ սփիւռքը. «Տակաւին մեր յիշողութիւնը կ'երթայ հեռուն՝ Զարեհներէն, Գարեգիններէն, Բարգէններէն, Աջապահեաններէն մինչեւ Այնթապցի, Կեսարացի, Սասունցի, Զէյթունցի կտրին կաթողիկոսները, որոնք օտարութեան մէջ ցիրուցան մեր ազգին բեկորները պահեցին, պահպանեցին ու սփռեցին: Այս բոլոր նուիրական հայրապետները այսօր դուրս կու գան պատմութեան ստուերներու մէջէն եւ լուսաւոր դէմքերով Զեր Վեհափառութեան ընկերացած, կը բերեն մեր մարտիրոս եկեղեցիին օրհնութիւնները»¹²:

Հայրապետական սոյն այցելութիւններէն բացի, Կիլիկիոյ Հայրապետներու եւ Մխիթարեան Հայրերու բանասիրական հետաքրքրութեան ոլորտը եւս, կողմերուն միջեւ ձգողական ոյժ ստեղծած է: Այս ծիրէն ներս երկու նշանաւոր ղէմքեր եղած են Բարգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Կիւլէսէրեան եւ Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեանց, չմոռնալով նաեւ շարք մը միաբաններու սերտ գործակցութիւնը բանասիրական բնագաւառէն ներս:

ԲԱՐԳԵՆ ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ

Կիւլէսէրեանի հետաքրքրութիւնը Մխիթարեաններու աշխատանքին շուրջ կը սկսի Արմաշու Դպրեմանքի գրասեղաններէն, երբ իր աւարտաճառը կը պատրաստէր, եւ կը հասնի մինչեւ Կիլիկիոյ Կաթողիկոսական գահը, երբ արդէն Աթոռակից կաթողիկոս էր, տարաբախտ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսի կողքին: Այս հետաքրքրութիւնը փոխադարձ էր, որովհետեւ երբ Եղիշէ պատմիչի մասին իր բանասիրական ուսումնասիրութիւնը, զոր կը վերանայի Ծայրագոյն վարդապետ եղած միջոցին, Կ. Պոլսոյ «Իզմիրլեան Կտակ»ի մրցանակին կ'արժանանայ, «Հանդէս Ամսօրեայ»ն կ'անդրադառնայ սոյն մրցանակին եւ կը խնդակցի. «Մեծ հանդիսութեամբ այս տարի ալ կատարուեր է այս կտակին հանդէսը, եւ մրցանակներն ինկեր են Տ. Բարգէն Ծ. Վ. Ի «Եղիշէի» աշխատութեան եւ Տ. Մուշեղ Ծ. Վ. Ի «Գրիգոր Նարեկացի» անուն ուսումնասիրութեան: Կը շնորհաւորենք այս երկու Արմաշցիները»¹³:

12 Անդ, 97:

13 «Հանդէս Ամսօրեայ», ԺԲ(1898), քիւ 8-9, 284:

Բարգէն Կիւլէսէրեանի բանասիրական գործակցութիւնը Մխիթարեաններու հետ նախ մասնագիտական է: Անոնց մամուլի էջերուն մէջ Կիւլէսէրեանի կողմէ ստորագրուած յօդուածները հետաքրքրութիւն ստեղծեր էին իր նկատմամբ, մինչեւ որ իր հեղինակած գործերէն չորս առանձին հատորներ, Մխիթարեաններ հրատարակեցին Ազգային Մատենադարանի շարքին մէջ¹⁴:


Հմուտ բանասէրը, Եգնիկի բնագրի վրայ կատարած մանր սրբագրութիւնները հրատարակելով, Սահակ-Մեսրոպեան դպրոցի լեզուի հմուտներու դատողութեան կը յանձնէ, համեստօրէն ըսելով. «Եթէ իմ ըրած սրբագրական փորձերը եւ տուած մեկնութիւնները յանդուգն են, սիրով պիտի ընդունիմ գանձնմ ուղղելու կամ լրացնելու համար եղած ամէն դիտողութիւն»¹⁵:

Բանասիրական պրպտումներու նոյն ողջմտութեամբ ալ ան կը կարգայ նոյն ամսագրի էջերուն մէջ իր «Եղիշէի» ուսումնասիրութեան դէմ գրուած Գրիգոր Տէր Պօղոսեանի յօդուածը, ուր նոյնիսկ յօդուածագիրը բազմաթիւ հակափաստեր կը ներկայացնէ Կիւլէսէրեանի ներկայացուցած իւրաքանչիւր փաստարկին¹⁶:

14 ա.- Ծովմ Տյուր եւ Հռոմ-Կրայ, Ազգ. Մատ. հ. ԽԵ., Վիեննա, 1904, ք.- Կոլոտ Յովհաննէս Պատրիարք, Ազգ. Մատ. հ. ԽԶ., Վիեննա, 1904, գ.- Եղիշէ Էրմնական ուսումնասիրութիւն, հ. ԾԵ., Վիեննա, 1909, դ.- Խալամբ հայ մատենագրութեան մէջ, հ. ՃԻԳ, Վիեննա, 1930: Ի դէպ այս վերջին գործը մատենագրական յայտնութիւն մըն է, ինչպէս ի՛նք կը գրէ յառաջաբանին մէջ, որովհետեւ քարոզիչ եւ Ազգային Մատենադարանի (այսպէս կը կոչուէր Կ. Պոլսոյ մէջ գտնուող ձեռագրերու հաւաքածոն եւ հաւաքավայրը՝ Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ աւանդատան մէջ), ձեռագրերու պատասխանատուն ըլլալով, կը գտնէ Գ. Տաթեւացիի «Գիրք Հարցմանց»ի ձեռագիր մէկ օրինակը եւ գայն կը բաղդատէ տպագիր օրինակին հետ: Ան կը նկատէ որ Տաթեւացիի «Ընդդէմ Տանկաց»ը ամբողջութեամբ կը բացակայի տպագիրին մէջ: Եղածը կը վերլուծէ, ըսելով որ Օսմանեան գրաբնութեան վախճալով, Սուլթանին, Թուրքին եւ իսլամին դէմ որեւէ բառ հրատարակել զգուշացած են եւ գանց առած այդ բաժնի տպագրութիւնը: Զգուշատրութեան մասին անդրադառնալով, ան կը յիշէ «Լոյս» շաբաթաթերթը խմբագրելու իր տարիները, երբ ինք եւս կը զգուշանար գրաբնութեան, իսկ Օսմանեան Տէրութեան մէջ այնքան վստահելի համարուած Օրմանեան պատրիարքը «Քննասէր» կը ստորագրէր, ամբողջութեամբ կրօնական բնոյթի իր յօդուածներուն ներքեւ, որոնք հետագային Աւետարաններու իր մեկնութեան «Համապատում»ը կազմեցին:

15 «Հանդէս Ամսօրեայ», ԻԱ(1907), թիւ 9-10, 316:

16 Անդ, Ի(1906), թիւ 7, 219-221:



Բաբգեն Ա. Կիւլեւերեան, կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ

Քարոզներու իր գիրքին¹⁷ քննադատական ներկայացումը Հանդէս Ամսօրեային մէջ, բարձրորակ հաճոյք կը պատճառէ գրասէր մարդուն, իր այնքան առողջ ու անաչառ քննադատութեամբ¹⁸:

Միւս կողմէ, գովեստի արտայայտութիւններ կը հնչեն նոյն մամուլին մէջ, Հ. Ներսէս Ակինեանի գրչով, ուղղուած Կիւլէսէ-րեանին, Վարդան Մամիկոնեանի գերագանց օրինակի ժողովրդականացմանն անոր կատարած ճիգին համար. «Ներկայ դժբախտ օրերուն, հայ արինոտ սրտերուն մէջ ի՛նչ ամէնէն աւելի կրնար ազդու բաղսամոն ըլլալ, քան Կարմիրն Վարդանայ գործոց եւ արութեան վերլիշումը: Ահա այս նպատակաւ կը բարձրացնէ Ամերիկահայ մամուլն հրապարակի վրայ սիրուած ժողովրդական հերոսին պատկերը, Քաջն Վարդանայ կենսագրութիւնը, Բաբգեն Նպիսկոպոսի շնորհալից վրձինի արդիւնքը: ...Նշիշէի քննական ուսումնասի-

17 ԿԻԻԼԷՍԵՐԵԱՆ, Բ. Մ. Վ., *Քարոզներ*, հ. Ա., Կ. Պոլիս 1904:

18 «Հանդէս Ամսօրեայ», ԺԸ(1904), քիւ 8-9, 282:

րութեան հմուտ հեղինակն անշուշտ միակ հեղինակութիւնն է վարդաւանց պատերազմի պատմութեան համար»¹⁹:

Մխիթարեան մամուլը լեցուն է Կիւլէսէրեանի որակաւոր յօդուածներով, որոնց շնորհիւ այսօր կարելի է գաղափար կազմել Անկիւրիոյ Կարմիր Վանուց վերջնականապէս կորած եւ թրքական բարբարոսութեան հետեւանքով փճացուած ձեռագրերու բովանդակութեանց բացառիկ նիւթերուն մասին, ինչպէս ասորերէն-հայերէն յարուցեան տաղի մը գոյութիւնը իր խաղաղութեամբ²⁰, դարձեալ Անկիւրիոյ Կարմիր Վանուց թիւ 29 ձեռագիր Սաղմոսարանի մագաղաթեայ պահպանակներուն վրայ գրութիւնը՝ գրերու գիւտը ներկայացնող²¹, եւ այլն:

Հ. Արիստակէս Վարդանեանին ուղղած իր նամակին մէջ, 5 Մայիս 1921ին գրուած Միացեալ Նահանգներու Մէսէջուէթց Նահանգէն, Կիւլէսէրեան կ'ողբայ Կարմիր Վանուց ձեռագրատան կորուստը որ կրնար վարդապետին օգտակար հանդիսանալ իր մատենագրական ուսումնասիրութիւններուն ընթացքին. «Երանի՛ք է Անկիւրիոյ Կարմիր Վանուց ձեռագիրք Զեր առջեւ ըլլային հիմայ. ի սպառ կորսուած են ատոնք թիւրք ռերագործութեան փաղաղիչ արշաւանքին տակ»²²:

Մխիթարեաններու հետ բանասիրական երկխօսութիւնը նաեւ յանդգնութիւն կու տայ Կիւլէսէրեանին, սրբագրութիւններ կատարել Զամչեանի եւ Օրմանեանի գրածներուն մէջ, Կ. Պոլսոյ պատրիարքութեան ծագման կապուած. «Թէ՛ Զամչեանի պատմածին եւ թէ՛ Օրմանեանի գրածին եւ ենթադրութիւններուն մէջ մէկէ աւելի կէտեր կան, որ պէտք է սրբագրուին եւ ճշգրտուին նորագիտ աղբիւրներու համեմատ»²³: Այս առիթով կը յիշատակէ Ամբրիկայի մէջ, Կանիմեաններու յարկին տակ իր հանդիպած, 1438ին Կ. Պոլսոյ մէջ գրուած ձեռագիր Մաշտոցի մը յիշատակարանը, գրուած Յակոբ արեղայի ձեռքով, Յովակիմ Արք.ի հրամանով, որ Կ. Պոլսոյ գրաւումէն 15 տարի առաջ ալ քաղաքի

19 Անդ, ԼԳ(1921), թիւ 3-4, 252:

20 Անդ, ԻԷ(1913), թիւ 10, 639-640:

21 Անդ, ԻԸ(1914), թիւ 10-11, 656-666:

22 ՏԷՄԻՐՃԵԱՆ, Վ., Բարգէն Ա. Աթոռակից Կթդ.ի անտիպ նամակները, ուղղուած Վիեննական Միջինարեան հայրերուն (1895-1936), Անթիլիաս 1996, 280:

23 «Հանդէս Ամսօրեայ», ԼԸ(1924), 435:

Արքեպիսկոպոսն էր: Այսինքն՝ Չամչեանի եւ Օրմանեանի ենթադրութեամբ, գրաւորմէն ետք չէ՛ որ հայոց ներկայացուցիչ եղած է Յովակիմը:

Կիւլէսէրեանին կապը Մխիթարեաններու հետ եղբայրական է, անկեղծ եւ մշակութային անքակտելի սիրով կապուած: Կ. Պոլսոյ մէջ եղած միջոցին, դեռ վարդապետ, 1903ին, ան ներկայ կը գտնուի տիպ ու տառի սպասաւոր եւ Մխիթարեան համեստ վանական կենցաղով համբաւաւոր Հ. Եղիշէ Ծ. Վրդ. Գաֆթան-ճեանի քահանայական 50ամեայ յորելեանին²⁴: Ան երբեք չի՛ մոռնար ցաւակցական գիրերով իր վշտակցութիւնը յայտնել Մըխիթարեաններու կրած սուգերուն. «Եթէ մարդկային կեանքի համար բաղձալի բարձր հանգրուանի վրայ, ձեռք հատած ճրագի մը բրնձան շիջումն ալ նկատուի, բայց կը սաստկացնէ Միաբանութեանդ սուգը» կը գրէ ան իր ցաւակցական հեռագրերէն մէկուն մէջ»²⁵:

Աշխարհաւեր պատերազմին պատճառով Ամերիկա մնացած Բարգէն Եպիսկոպոսը, լուռ ճիգով հանգանակութիւն կը կատարէ ի նպաստ բանասիրութեան, ու Մխիթարեաններու կողմէ կատարուող մշակութային անգնահատելի առաքելութեան. «Ամերիկայի Հայոց մէջ ալ պակաս չեն այնպիսիներ, որոնք գիտեն եւ կը զգան բարեյիշատակ Միքիթարի մեծագործութիւնը եւ անոր ուսումնասէր աշակերտութեան հոյակապ ծառայութիւնը հայ մտաւորական կեանքի հետազոտութեան եւ մշակութեան մէջ: Ահա այսպիսի բարեկամներու եւ գնահատողներու գործակցութեամբ է, որ կարող եղայ հանգանակել ԵՕԹԸ ՀԱՐԻԻՐ ՔՍԱՆ ՀԻՆԳ ՏԱԼԷՐ, ՀԱՆԻԿՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ Հիմնադրամին, յանուն նուիրատուաց: ...Գրեցէ՛ք ինծի ճշգրտութեամբ, թէ ո՞րչափ դրամ պէտք է Ձեր ԵՓՐԵՄԻ հրատարակութեան համար, թերեւս կարող ըլլամ հետաքրքրել զովանս»²⁶, մըտերմարար կը գրէ ան, Հանդէս Ամսօրեայի խմբագիր Հ. Ներսէս Ակինեանին, 7 Դեկտեմբեր, 1920ին, դարձեալ Միացեալ Նահանգներէն: Կիւլէսէրեանը երկու առիթներով Վենետիկ կու գայ, առաջինը 1922 թուին, 5-8 Հոկտեմբերի օրերուն²⁷, իսկ երկրորդը՝

24 ՊՕՂՈՍԵԱՆ, Հ. Ե., Համայնապատկեր Վիեննայի Միքիթարեան Հայրերու կրթական գործունէութեան, Կ. Ա., Իսթանպուլ 2008, 42:

25 «Հանդէս Ամսօրեայ», ԽԵ(1931), թիւ 1-2, 18:

26 ՏԵՄԻՐՃԵԱՆ, Վ., *ճշ. աշխ.*, 147:

27 Անդ, 163:

1925ին, որոնց մանրամասնություններու մասին տեղեկություններ կը գտնենք իր նամակներուն մէջ²⁸:

Փոխադարձ յարգանքի բացառիկ արտայայտութիւն կարելի է համարել Մխիթարեաններու կողմէ, Բաբգէն Վեհափառի կանխահաս վախճանման լուրով սկսիլը իրենց հայագիտական ամսաթերթը, եւ Հ. Ներսէս Ակինեանի կողմէ կազմութիւնը երանաշնորհ հայրապետի մշակութային կենսագրականին, ու հայագիտական առաքելութեան, չմոռնալով Կիւլէսէրեանի եղբայրական մօտեցումները, զոր Ակինեան կը համարէ «Գեղեցի՛կ գրաւական մը իր վեհոգի Անձին եւ բարեգգաժ վերաբերութեան հանդէպ Մխիթարեան Միաբանութեան»²⁹:

ԳԱՐԵԳԻՆ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ ԵՒ ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐ

Մխիթարեան հայրերուն հետ ջերմ գործակցութիւն ծաւալող երկրորդ մեծ դէմքը Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն, որ հայ մշակոյթի հանդէպ իր պաշտամունքի հասնող սիրոյ մղումով առաջնորդուեցաւ, Գարեգին Ա. Յովսէփեանց կաթողիկոսն էր:

«Ես էլ մտածում եմ վեցստիկ գնալ, մի երկու կարենոր ձեռագիր կայ տեսնելու եւ մի երկու լուսանկար առնելու, բայց փող չունեմ»³⁰, կը գրէ ան, Ֆրիկի Դիւանը կազմող Տիրայր Վարդապետին, 1911թուի Օգոստոս 12ին, Երուսաղէմէն, խնդրելով որ եթէ իր երթալը չյաջողի, ան, Ժ. դարու ձեռագիր Տրապիզոնի կոչուած եւ ԺԱ. դարու ձեռագիր Վարդայ³¹ կոչուած աւետարաններուն մասին համառօտ տեղեկություններ քաղէ, ինչպէս նաեւ մի քանի լուսանկար ապահովէ գիրքերէն եւ զարդերէն, ու իրեն ուղարկէ: Երեք օր յետոյ 15 Օգոստոս թուակիր երկրորդ նամակ մը կը գրէ Տիրայր վարդապետին աւելի մանրամասն, ի միջի այլոց կրկնելով Ս. Ղազար այցելելու իր խոր փափաքը. «Այժմ գտնի իմ փոքիս ցաւին: Եթէ դրամական միջոցս ներքէ, ինքս վեցստիկ կը գայի մի քանի շաբաթով: Բայց այսպիսի առիթն էլ որ դու գնում ես, մի մեծ յաջողութիւն է»³²:


28 Անդ, 240:

29 «Հանդէս Ամսօրեայ», Ծ(1936), 297:

30 Ա.ԳԱՄԵԱՆ, Ա., Գարեգին Յովսէփեանի մի քանի անտիպ նամակները, «Պատմա-բանասիրական Հանդէս», 1969, քիւ 3, 242:

31 Այլ նամակի մէջ միեւնոյն աւետարանը կը կոչէ «Վարդի» (Անդ, 243):

32 Ա.ԳԱՄԵԱՆ, Ա., նշ. աշխ., 243:



Գարեգին Ա. Յովսէփեան, կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ

Յովսէփեանց իր նամակներէն մէկուն մէջ ուղղուած Արշակ Զօպանեանին, գրուած Լալպցիկէն, 5 Յունիս 1914ին, կը յիշէ ձեռագրերու պրպտողական աշխատանքով Վիեննայի Միսիթարեաններու քով հիւրընկալուած ըլլալը. «Անտոնեանց հարց միաբանութեան մատենադարանում աշխատել եմ կարն ժամանակով, մօտ 600 ձեռագիր ունեն, մեծարժէք, պատկերազարդ ձեռագիրներ չունեն, նրանց ունեցածը մի աւետարան է հին, պարզ, բայց հետաքրքրական պատկերներով, որ Ժ. դարու գործ է համարում. առանց թուակաւնի է»³³:

Հ. Ն. Ակինեան Հանդէս Ամսօրեայի մէջ գրախօսելով Յովսէփեանցի Յիշատակարանք Ձեռագրաց մեծածաւալ հատորը, Անթիլիասի մէջ տպուած, առիթ կը գտնէ տողամիջեան արտայայտութիւններով իր երկար տարիներու մտերմութիւնը պատմել անոր հետ: Կը յիշէ 1912 թուին Էջմիածին տուած այցելութիւնը, ուր առաջին անգամ ծանօթացած էր Ս. Հռիփսիմէի վանքի

33 Անդ, 159:

վանահայր Գարեգին վարդապետին, որ բազմաթիւ հիւրեր զիմաւորելու խնդրուած մէկ պահուն իսկ, ձեռագիրներու մասին իր հետ առանձին գրոյց ունենալու առիթ գտեր էր. «Վայրկեան մը զիս առանձին ձգեց. վերադարձաւ դէպ մը մեծադիր քիթերու վրայ գրուած Յիշատակարաններով, Ժամանակագրական կարգով դասաւորուած»³⁴:

Յովսէփեանց մինչեւ վերջ, նոյնիսկ Կիլիկեան գահուն բազմեյէ ետք, մնայուն կապի մէջ պիտի ըլլար Մխիթարեան հայրերուն հետ, հայ մշակոյթի լծակից եղբայր գտած ըլլալու հաւատարմութեամբ: Բազմալէսի հրատարակութեան հարկւրամեակին առիթով, Ս. Ղազարի ընդհ. Աբբահօր՝ Հ. Սրապիոն Վրդ. Ուլուհոճեանին ուղղած իր շնորհաւորական խօսքով, մաքուր սրտէ բխած անկեղծ զգացումներով գնահատանք կը յայտնէ. «Ամբողջ դար մը անընդհատ ան բարձր պահած է գիտութեան եւ արուեստի դոշը եւ ծառայած հայ մշակոյթին»³⁵, կը գրէ ան:

Մխիթարեան մամուլը շատ վաղուց, 1897 թուականէն սկըսեալ իր սիւնակներուն մէջ տեղ պիտի տար կամ՝ գրախօսութեամբ անդրադառնար գիտնական մարդուն, երբ դեռ սարկաւագական աստիճանով, ո՛չ միայն զբաղած էր բանասիրութեամբ, այլ գերմաներէն լեզուով լոյս ընծայած էր իր դոկտորական աւարտաճառը, «Միակամ վարդապետութեան ծագման պատմութիւնը», գրքի տիտղոսաթերթի պատճէնն ալ ծանուցելով³⁶:

Նոյնպէս Հ. Յակովբոս Տաշեանի գրչով գրախօսուած է Յովսէփեանցի «Մխիթար Սասնեցի»ի նուիրուած աշխատութիւնը³⁷, «Խաղրակեանք կամ Պոռնեանք» աշխատութեան մասին կը կարգանք Հ. Ն. Ակինեանի կատարած արժեւորումը³⁸, իսկ Ակինեանի հետ «բանասիրական եղբայրութիւն»ը կ'արտայայտէ Յովսէփեան, երբ անոր նամակէն իմանալով թէ Գրիգորիս Աղթամարցիի կենսագրութեան եւ տաղերու ուսումնասիրութիւնը կը կատարէ, երկար եւ ձեռագիրներէ վերցուած պատկերազարդ յօդուածով մը իր գտած նորութիւնները կը հաղորդէ բանասիրութեան, նախարանին մէջ արձանագրելով. «Կամենում եմ գործի լրութեան

34 «Հանդէս Ամսօրեայ», ԿԶ(1952), քիւ 1-3, 153:

35 «Բազմալէս», ԶԶ(1948), քիւ 1-2, 40:

36 «Հանդէս Ամսօրեայ», ԺԱ(1897), քիւ 11, 348-349:

37 Անդ, ԺԳ(1899), քիւ 12, 378-380:

38 Անդ, ԽԳ(1929), քիւ 6-7, 441-446:

մասամբ օգնած լինելու համար, մատչելի դարձնել այն նիւթերը, որ յաջողուել է մեզ ձեռք բերել»³⁹:

Վերջապէս, «Բազմավէպ» պիտի սգար նաեւ հայ մշակոյթի մեծ առաքեալին՝ Գարեգին Յովսէփեանցի վախճանումը, իբրեւ 1952 տարուան «ազգային մեծագոյն սուգը», անկախ Հայ Եկեղեցւոյ բարձրագոյն աստիճանը ունեցող հոգեւորականի անոր հանգամանքէն. «Հոգեւորականի մը՝ որ կրթական-հովուական ասպարէզներէն դուրս եւ վեր՝ որոնց մէջ երկար տարիներ ապրեցաւ ու գործեց մեծ եռանդով ու նուիրումով, մեծ անուն մը կը թողու իբրեւ բանասէր ու մանաւանդ իբրեւ Հայ հնագէտ եւ Հայ գեղարուեստի եւ վերջապէս ընդհանուր առումով Հայ քաղաքակրթութեան պատմութեան ուսումնասէր, թողլով մեզի գրական մեծաբանակ եւ թանկագին արդիւնաբերութիւն մը որ պատկանելի է եւ մեծապէս գնահատելի նոր ուղիներուն համար գոր քացաւ, նոր լոյսերուն համար գոր նառագայթեց մեր անցեալի գեղարուեստական պատմութեան վրայ»⁴⁰:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՒԱՆԱՆՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Եկեղեցիներ եւ մեր ազգի պարագային յարանուանութիւններ, իրենց դաւանական տարբերութիւններով կան, նաեւ այդ տարբերութիւններով՝ կը յարգուին: Մխիթարեան հայրերու անչափելի ծառայութիւնը հայ մշակոյթին, հայ եկեղեցւոյ զաւակներուն հարազատ դարձուցած է զանոնք, հակառակ դաւանական տարբերութեան:

Վերոյիշեալ երկու բարձրաստիճան հոգեւորականները, որոնք իրենց բանասիրական, ձեռագրագիտական եւ հնագիտական պրպտումներու պատճառով այնքան սերտ յարաբերութիւն մշակած են հայ մշակոյթի առաքեալներուն՝ Մխիթարեան հայրերուն հետ, սակայն բնաւ չեն խախտած դաւանական սահմանները: Եւ հրաշքը այդ սահմանագծումներուն մէջ է. յանուն մշակոյթի, յանուն հայ դպրութեան եւ արուեստներու՝ չզոհել հայ եկեղեցին, չզոհել դաւանանքը եւ փոխադարձաբար: Ինչպիսի՜ նրբութեամբ, հայ եկեղեցւոյ մշակութանուէր սպասաւորները կրցեր են որոշել սահմանները երկուքին միջեւ:

39 Անդ, ԽԴ(1930), քիւ 1-2, 41:

40 «Բազմավէպ», ՃԺ(1952), քիւ 10-12, 231-239:

Բարգէն Ա. Աթոռակից Կաթողիկոս Կիւլէսէրեան եղբայրական նամակ մը կը գրէ Ամենայն Հայոց Խորէն Ա. Մուրատրէկեան Կաթողիկոսին, տեղեկացնելով անոր Ամերիկահայ գաղութի նախկին սպասաւոր Հայ եկեղեցւոյ՝ «չֆահանայ Խաչիկ Գոռուգեան»ի մասին, որ իր առաջնորդին հետ կարգապահական հարցի մը պատճառով պատիժ ստանալով, Բազմավէպի 1933ի Մայիսի թիւին մէջ համարձակած էր ջատագովել Հայ եկեղեցւոյ անյապաղ միացումը կաթողիկ եկեղեցւոյ. «Գոռուգեան ուխտադրուծ մըն է եւ դաւանանք իր եկեղեցիին եւ իր ֆահանայական կարգին... Եթէ Կիլիկիոյ Կաթողիկոսական Թեմէն կախնալ ըլլար Ամերիկայի Թեմը, մենք առաջին առթիւ կ'ենթարկէինք յօդուածագիրը կանոնական պատժի ի հարկէ Դուք եւ Ձեր Գեր. Հոգ. խորհուրդը կը տեսնէ՞ Բազմավէպը, հետեւաբար կարդացի՞ք կամ կը կարդա՞ք առոր Մայիսի թիւին Գոռուգեանի խուլադատութիւնները, բայց մենք պարտք համարեցինք մեզի փութալ տեղեկ պահել Ձեր Վեհափառութիւնը գայթակղութեան մը, որ ամէն կերպով պէտք է դատապարտուի Մայր Աթոռէն եւ յայտարարուի Ձեր օրհնաբեր կոնդակով»⁴¹: Նոյն նամակին մէջ, Բարգէն Կաթողիկոս պատեհ առիթը գտնելով, Խորէն Մուրատրէկեանը տեղեկ կը պահէ Լիբանանի մէջ հաստատուած չքաւոր ժողովուրդի թշուառ կացութենէն օգտուող եւ դաւանական մարդոքսութիւն կատարողներու մասին⁴²:

Դաւանաբանական հիմունքով աւելի խիստ եւ Հայ եկեղեցւոյ անկախութիւնը պաշտպանող աւելի արմատական կեցուածքի մը կը հանդիպինք Գարեգին Յովսէփեանցին կողմէ գրուած նա-

41 ԲԵՀԲՈՒԹԵԱՆ, Ս., Վաւերագրեր հայ եկեղեցու պատմութեան, հտ. Դ., ԽԱՊԱՅԵԱՆ, Ս. Բ., ԿՔՊ. Կիլիկիոյ, Երևան 1997, 527-528:

42 Նոյն նամակին մէջ, Կիւլէսէրեան շատ մտահոգիչ կը գտնէ նաեւ հայ կաթոլիկ պատրիարքութեան Պոլսէն Պէյրութ փոխադրութիւնը. «Այնպիսի շրջանի մը մէջ եմք, Վեհափառ եղբայր, որ արդէն Հոռմ ամէն գնով կ'աշխատի մեր ժողովուրդը որսալ, մանաւանդ Սուրիոյ մէջ, այս նպատակաւ է որ կաթոլիկ պատրիարքութիւնը փոխադրուեցաւ Պէյրութ: Յիսուսեան կրօնաւորներ, որ հարիւր տարի է ի վեր կ'աշխատին Լիբանանու մէջ, այժմ ընդարձակած են իրենց գործունէութիւնը, ամէն տեղ դպրոց հաստատելով: Իսկ հայ կաթոլիկները, ուժաւորուած Վատիկանէն, ամէն առիթէն կ'օգտուին լատին փոքրականոր յաջողցնելու համար: Հայ կաթոլիկները մարդ ունին, դրամ կը ստանան Հոռմէն: Պապը պալատի նման Պատրիարքարան մը շինեց անոց Պէյրութի մէջ, հայաշատ քաղի մը բարձունք: Անոց կ'ուզեն շահագործել մեր տկար եւ չֆաւոր կացութիւնը» (Անդ, 528):

մակով, 1901 թվականի Նոյեմբեր 19ին Թիֆլիսէն, ուղղուած Տ. Տ. Մկրտիչ Խորմեան կաթողիկոսին Ամենայն հայոց:

Երիտասարդ Գարեգին վարդապետը դիմում ստանալով Հ. Ղեւոնդ Ալիշանի հոգեհանգիստը հայ եկեղեցւոյ մէջ կատարելու, խստիւ արգելք կը հանդիսանայ, ճշդելով երկու յարանուանութիւններուն դաւանական սահմանները, հակառակ Ալիշանի հանդէպ իր պաշտամունքի հասնող յարգանքին. «Եւ փորձել էի մի առ մի բացատրել նրանց, թէ ինչո՞ւ պատշաճաւոր չեմ համարում հայ գրական-գիտական, բայց այլադաւան գործչին մեր եկեղեցու մէջ հոգեհանգիստ կատարել եւ յորդորել էի դորա փոխարէն ներկայ լինել ինձ հետ հայ-հռովմէական եկեղեցում կատարուելիք հոգեհանգստեան, ինչպէս ընդունուած է բարեկիրթ հասարակութեան մէջ»⁴³: Ապա շարունակելով, Յովսէփեանց ուղղակի կ'որոշէ դաւանանքի եւ մշակոյթի սահմանները. «Եթէ Ալիշանը ամենիս համար պաշտելի է որպէս բանաստեղծ եւ գիտնական, եթէ մենք դաստիարակուել ենք նորա բանաստեղծութիւններով եւ շատ բան ուսել նորա գիտական աշխատութիւններով, ուստի եւ երախտագէտ ենք դէպի նորա յիշատակը, սակայն, յայտնի է, որ նոյն Ալիշանը իւր կրօնական-եկեղեցական գաղափարներով հակառակ էր Հայաստանեայց եկեղեցու անկախութեան...»⁴⁴:

Վերոյիշեալ մէջբերումները դոյզն մէկ մասնիկն են, մեր եկեղեցւոյ անկախութեան եւ դաւանական ինքնութեան ջատագով հայ հոգեւորականութեան արտայայտութիւններուն, որոնք ներկայիս, միջ-եկեղեցական բարւոք յարաբերութիւններու դարաշրջանին, փոխադարձ յարգանքով եւ ճանաչողութեամբ օրհնուած են:

ԳՐՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հայագիտութեան նահանջի մասին լուրերը գաղտնիք չեն մեզի համար, սակայն անցեալէն օգտուելու առիթը միշտ բաց է բոլորիս առջեւ: Իրենց հոգեւոր պարտականութիւններու կողքին մշակութային առաքելութիւն ծաւալող մեր Միաբանութիւններէն կը սպասուի գործակցութեան նոր հեռանկարներ մշակել:

43 Հայաստանի Ազգային Արխիւ, Գարեգին Ա. Յովսէփեան Կթղ. Մեծի Տանն Կիլիկիոյ, Փաստաթղթեր եւ նիւթերի ժողովածու, հտ. Ա., Ս. Էջմիածին 2017, 39:

44 Անդ:

Հինէն, անցեալի հարստութենէն եւ տիպարներու անձէն օգտուելու սքանչելի միջոց մըն է, անոնց անտիպ արխիւներուն ուսումնասիրութիւնը: Մխիթարեաններուն հետ Յովսէփեանցի նամակագրութիւններուն արխիւը դժբախտաբար տակաւին չէ՝ ուսումնասիրուած: Վիեննայի Մխիթարեաններուն եւ Բարգէն Կաթողիկոսին նամակագրութիւնները լոյս տեսան Անթիլիասի մէջ 1996ին, Վարդան Արք. Տէմիրճեանի աշխատութեամբ:

Թերեւս ինչքա՛ն նիւթ կայ Յովսէփեանցի նամակներուն մէջ, ուղղուած Մխիթարեան հայրերուն, հայ բանասիրութեան խուզարկուներուն առջեւ նոր հորիզոններ բացող: Գործակցութիւնը այս բնագաւառէն ներս, այլ իմն նորութիւն պիտի հանդիսանայ հայ բանասիրութեան եւ մշակութային գանձերու վերարժեւորման:

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԶԻՖԹՃԵԱՆ